

ՉԻՆԱՑԻՔ

Ներքեմն Բարիկի եւ այժմ Պերլինի չինական դեսպանատան խորհրդական Ջորջ Չենկ-Քի-Թոնկ, որ եւրոպական լեզուած եւ գիտութեանց բազմաձև տանձ մ'է, վերջերս հետեւեալ բանախօսութիւնն ըրած է գերմանական մայրաքաղաքին մէջ։ Ջորջ Չենկ-Քի-Թոնկ իրեն հոգածութեան առարկայ ըրած է Ներքեմնի թիւր կարծիքները զբնի Չինացւոց նկատմամբ։ Այս մտօք արդէն ֆրանսերէն լեզուաւ հրատարակած է ընտիր գիրք մը։ «Չինացիք նկարագրեալ ինքեանց»։

«Տասն տարի Ներքեմնի մէջ ապրելով լաւ համոզուած եմ որ աշխարհիս մէջ Չինաստանէ աւելի չկայ անծանօթ մի երկիր։ Մենք 400,000,000է աւելի ազգ մ'ենք եւ տակաւին մեզ ներկայացնող ամենախառնազգայնութիւններ կ'ապրին ձեր մէջ։ Մեր ազգը զաղափարներ կարծուած է, որուն գլխաւոր հաճոյքը կը կայանայ խառն օձեր եւ խորոված շուններ ուտելու մէջ, առանց սակայն յիշելու օձի ձուերն եւ այլ նոյնատեսակ իրերն, եւ նմանապէս կարծուած է թէ մենք խղճի հանդարտութեամբ կը դենումք մեր զաւակներն ի կերակուր խոզացի։ Այս բոլոր կարծիքները գլխաւորաբար ծընունդ առած են Չինաստանի վրայ դժբախտաբար զբերէր օրը լինէն ամեն տեսակ ստոյթիւններով։ Ձեր ճամբորդներն, որք տարօրինակ բան մը միտումունքն եղած են, իրենց պատահած առաջին խենդի հետ խօսակցելով նշանակած են դուրս ամեն ըսածներն, եւ տուն վերադառնալով հրատարակած են զայն աշխարհի առջեւ իբր ընդհանուր օրէնք մեծ ազգի մը սովորութեանց ու կենցաղավարութեան։ Ահա ասոր համար է որ հետեւեալ մի քանի դիտողութիւնները կ'ընեմ որպէս զի ձեր Չինաստանցւոց վրայ ունեցած մի քանի սխալ գաղափարները գոնէ կարենան ուղղուիլ առանց սակայն ի նկատ առնելու նոցա արժէքն ու կարեւորութիւնը։

«Գիտարին է զմեզ վայրենի կոչել վասն զի մեր քաղաքակրթութիւնը՝ թէեւ շատ տարբեր արեւմտեան քաղաքակրթութենէն, շատ հին է այն ժամանակներէն երբ տակաւին ներկայ մեծ ազգաց կազմակերպութիւնը տեղի չէր ունեցած եւ որք այսօր կը տիրեն աշխարհի ճակատագրին ու ժառանգութեան։ Չինաստանի մէջ էր որ առաջին անգամ վառօդն հնարուեցաւ, եւ կը յաւելում հետեւաբար թէ մենք միայն գիտացանք հրախաղերն հնարել։ Երբեք մենք վառօդով գիտացանք փամբուտներ չինեւ պատերազմի համար։ Քրիստոնէից թուականի հաշուով իններորդ դարուն տպագրութիւնն հնարուեցաւ ի մեզ։ Ներքեմնի դարուն գրուած մի գրչապիւր բառարան շատ մը բաներ կը պատմէ այսօր մագնիսի եւ ծովային ճամբորդութեան վրայ։ Աւելորդ է խօսիլ մետաքսի եւ չինական յաւաքապակիի վրայ որք միայն պիտի կրնային բաւական լինիլ ապացուցանելու համար մեր քաղաքակրթութեան բարձրագոյն աստիճանը։ Բայց ժողովուրդը պիտի հարցունէ անշուշտ թէ ինչո՞ւ կը զղկացեալ կը մնաք եւ ինչո՞ւ ձեր քաղաքակրթութիւնն յառաջդիմելով չի ընդհանրապէս։ Իմ պատասխանս շատ պարզ է այս մասին։ Ներքեմն ամեն կերպիւ գոհ է իւր ներկայ վիճակէն, ինչո՞ւ պիտի փոխադրէ իւր գոհացուցիչ ու վստահ կացու-

թիւնը փոխել տարակուսելի լաւագոյնին հետ։ Եւ կայ գաղափարն առած մը որ կ'ըսէ. «Լաւը թշնամի է լաւագոյնին»։

«Չին գարմացնող մեծագոյն բաներուն մէջ գլխաւորն եղաւ, առաջին անգամ Ներքեմն եկած ատենս, ձեր կանանց ընկերութեան մէջ մտնելն։ Ի Չինաստան, սոքա բաժանեալ կը պահուին արական սեռի անդամներէն։ Կանայք մեր երկրի մէջ չեն ծանօթացուիր այն մարդուն որ չի վերաբերիր իրենց շրջափակեալ ընտանեաց։ Սա իրեն օգուտներն ալ ունեցած է։ Չինական առած մը կ'ըսէ թէ ամէն տան կանանց ինն երեւակայական երկիւղի մը ենթակայ է, եւ միւս կողմէն էրկիւրդիկ ալ մաքուր չեն բնաւ։ Ընտանեկան հանգիստն ու խաղաղութիւնն հետեւաբար մեծ վտանգի կ'ենթարկի ասով։ Ընտանեկան կեանքն է այժմ մեծագոյն հիմը որոյ վրան կը կենայ այսօր ողջոյն Չինաստանի կառավարական ու ընկերական բոլոր շէնքերը։ Բաւական է ըսել թէ շատ օգտակար է անշուշտ ապահովել խաղաղութիւնն ընտանեկան կեանքի մէջ։ Գիտարութեանց գաղափարն արգիլելու եւ ասոնք խոռովութեանց կարելիութեան հետ մէկտեղ վանելու համար, մենք ի Չինաստան լաւագոյն սեպած ենք կնիկներն բաժնել այրերէն, եւ որ աւելին է ասով մենք արգիլած կը լինինք իրական խոռովութիւններն որք դժգոհութիւն կը պատճառեն միշտ։ Ի՞նչ կրնայ ընել ամուսին մը։ Նիւթ սպաննէ իւր անհաւատարիմ կնիկն, անշուշտ պիտի գլջայ օր մը, վասն զի երբեմն զայն ի սրտէ սիրած էր։ Եւ եթէ բարձրագոյն ատեններու գիմէ, հոն գոհացուցիչ բան մը չի գտներ ընդհանրապէս։ Վասն զի որքեալ էրկան մը առջի պատկուելու կամ ամուսնանալու կերպն ո՞չ գրթութիւն կը հրաւիրէ իւր վրայ եւ ոչ համակրանք։ Ներքեմնի մէջ երբ անվայել խենդիւր մը երեւան ելնէ, հոգ չէ ինչ որ ալ լինի տեսակն, առաջին հարցը կը լինի թէ «ո՞վ է կնիկն»։ Այս հարց անծանօթ է Չինաստանի մէջ, վասն զի մենք զիտանալով որ իգական սեռը կենաց մեծագոյն վտանգը կը ներկայացնէ, կ'արհամարհենք զայդ կարծեցեալ անիրաւութիւնն որով կը բաժնենք զանոնք արական սեռէն։

«Գիտեմ, բոլոր աշխարհ կը կարծէ թէ բազմակին ենք մենք։ Սա մեծ սխալութիւն է։ Այլ ընդհակառակն, ո եւ է մի անձ որ ամուսնացած է արդէն եւ նոր միութիւն մը կը յաւելու, դատապարտեալ է օրինօք։ Եւ սակայն կ'ըսեմ թէ հարձ պահեն արտօնեալ է ի մեզ։ Այս բառ թող չի ցնցէ զձեզ։ Դո՛ւք, Ներքեմնի, որ արձակ համարձակ կը խօսիք սիրահարներու եւ աններելի յարաբերութեանց վերայ, սաստիկ կը յուզուիք եւր հարձ բառը կ'արտասանեմ։ Եւ ես կը գործածեմ զայս բառ, վասն զի դա Ներքեմնի մէջ անծանօթ լինելով հանդերձ, Չինաստանի մէջ ճանչցուած է արդէն։ Սա ուրիշ բան մը չէ եթէ ոչ պաշտօնական միջոցով մը, որ իրեն յատուկ տեղ մը կը բռնէ ընտանեաց մէջ օրինական տիկնոջ հաճութիւնն առնելէ յետոյ միայն, որում պարտի սա նորեկն հնազանդ լինիլ եւ հպատակ ծառայի։ Այս տեսակ կանանց զաւակները նոյն իրաւունքն ունին, զոր ինչ կը վայելեն օրինական ամուսնոց զաւակները։ Սոյն սովորութեան նպատակն (որ ձեր կտակարանի պատմած Աբրահամու եւ Սառայի ժամանակ Տիրոջ օրէնքին կը համապատասխանէ) է արգելք մը լինիլ էրկիւրդուն առ-

ջեւ տունէ դուրս որ եւ է ապօրէն յարաբերութիւն հաստատելու։ Այս ինչ կամայն ինչ պատճառի համար նոր կնկան մը մը գաղափարն ընդունող տիկնոն ընդհանրապէս իւր էրկան յարուցած դժուարութիւններէն ձանձրացած կը լինի։ Բնականաբար ընտանեկան խաղաղութիւնն ու միութիւնն անդորր պահելու համար կը զիջանի հաւանութիւն տալ երկու չարեաց փոքրագունին, նոր կնկան մը գաղափարն։ Բայց, գիտեմ, Ներքեմնի մէջ, այս բոլորը ձեզ անքաղաքակրթութիւնն ու ապօրէն ընթացք մը պիտի թուի։ Սակայն, ըսէ՛ք ինձ, յարաբերութեանց միջոցաւ առանց ընտանիքի, շատ անգամ առանց որ եւ է փոքր հարստութեան ու բնական զաւակ լինելու անջինջ ամօթովն աղտեղեալ դժբաղդ արարածներ յաշխարհ ածելէ շատ աւելի աղէկ չէ՞ միթէ այս։

«Չինի կնկան չափ յանիրաւի զրպարտեալ ոչ մի արարած կայ։ Նէ կարծուած է տղէտ, յիմար ու իւր գնալու անկարող տիկն կաշկանդեալ լինելը գիտնալու շափ անգէտ արարած մը, որուն բոլոր կեանքը բանեալ կ'անցնի տեսակ մը բոյնի մէջ։ Մեծ սխալ է այս։ Չինուհին կրնայ քաղի այնպէս՝ ինչպէս որ դուք կ'ամ ես կրնանք գնար։ Նէ դուրս կուգայ տունէն ամեն օր, առանց քօղի կը չմըն ու այցելութեան կը գնայ ու ամեն կէս օրէ յետոյ նէ իւր բաց քաշափով զուարճալի ժամանակ կ'անցունէ։ Մեր կանանց զբաղումը կը կայանայ իրենց զաւակաց կրթութեան, տան գործերը կարգադրելու ու ծաղիկներ մշակելու մէջ։ Մենք բարձրագոյն կրթութիւն կը զլանանք մեր կանանց, որչափ ալ փափագին այս վերջինը։ Սոցա կրթութիւն ամեն կերպիւ պարտի տարբերութիւն չիններէն։ Երկիւրդիկ ստեղծուած են արուեստից համար ու իրենց ընդունած կրթութիւնը կը ջանան օգտակար ընել վաճառականական եւ կառավարական ծառայութեանց, մինչդեռ կանայք այնպիսի միայն պարտական են ուսանիլ որչափ հարկաւոր է տուն կառավարելու եւ սերունդ յարուցանելու համար։ Մենք բնաւ չենք գաղափարեալ մեր կիները, զանոնք գիտական կրթութեանց անկարող նկատելով, այլ կը խորհինք թէ այս բոլորը պէտք է որ ի բաց վանենք իգական սեռի յատուկ կենաց գծի վրայէն եւ զանազանեք զանոնք՝ ընտանեաց մէջ իրենց բռնած տեղը ողջ պատճառաւ։ Կիներն ինքզինքը մաքրելու համար պէտք չունին ուսանելու, վասն զի նէ մաքուր ծնած է ու աշխարհիս ողջ գիտութիւնը կրնայ երբէք ուսուցանիլ նմա չէնք շնորհք ու կառավարութիւն։ Չինուհին իւր ամուսնացած օրէն սխալ հաւասար կը լինի իւր առն։ Նէ կրնայ ստարագրել որ եւ է գրութիւն յանուն ընտանեաց, կրնայ գնել ու վաճառել ստացածքներ, իրաւունք ունի իւր զաւակներն ամուսնութեան տալ եւ ճշմարտութիւն մէկ բացառութեամբ մի եւ նոյն քաղաքական իրաւունքն ունի ինչ որ կը վայելէ իւր էրկին, եւ որ աւելին է այս վերջինոյ տղան ուսած որ եւ է պատիւ կը վերաբերի երկուց ամուսնոց հաւասարապէս։ Կնիկը կրնայ իր էրկան վերաբերած պատուոյ որ եւ է արտօն ու անուն։ Սակայն կնիկը գլխաւորն չի կրնար առնուլ եւ ալ օժիտի սովորութիւն կայ։ արեւմտեան սովորութեանց սոյն մի ընթացքն, որ կրնանք դրամական ամուսնութիւն անուանալ, անծանօթ է Չինաստանի մէջ։

«Չամուսնացող ծերունիներն ու պառաւ-

ՊՈՍՓՈՐՆ



Տեսած էք երբէք երկու եղերքներ
կոհականման կանաչ լեռներով
Ուր կը ծածանին թաւուտ անտառներ,
Սիրարոյր ծաղկօք, ճոխ պալատներով,
Քեզիկերով սիրուն ցիրցան սփռած,
Վերջապահ մեղմ լուսով ողորուն
Դուրսն ու պատկերն իրենց շքեղաց
Յոլանցել ի ծոց թափանցիկ ծովուն:

Տեսած էք երբէք կապտագեղ ալիք,
Որ ի ծուն մտնող մանկան շունչին պէս
Հեզիկ միմունջով, գլորելով մեղմիկ
Համարոյր մը դրօշմել կուգան սիրակէզ
Աւալին վերայ, ու յետոյ իսկոյն
Երկչոտ խոյս տալով յափուկ զբաղի
Երթան միմնջել անդ խորհրդասուն
Բառեր ու երկեր անխմանալի:

Տեսած էք երբէք թեթեւ նաւակներ,
Որ ծովու հաւուց նման սիգապանծ
Քերելով մեղմիկ դիւթիլ եղերքներ,
Մանրիկ կոհակաց ճոճմամբն ծորուած,
Իբրեւ գերիւար հըլու հըպատակ
Որու երաստնքն արծակ կը թողուն,
Այն շարժուն դաշտաց վերայ կապուտակ
Գծեն փրփրագեղ ալօսք դողողուն:

Տեսած էք երբէք Պոսփորն հովառուն,
Այն շքեղագեղ գոտին լուսազգեաց
Որ սողոսկելով կ'ընթանայ սահուն
Մէջտեղէն երկու ծաղկագեղ ափանց:
Տեսած էք սարերն այն մշտադալար
Որ կարծես ժպտին ու կը զարմանան
Տեսնելով ալեացն ի ծոց զովարար
Իրենց անտառաց ստուերքն որ ծփան:

Դիտած էք երբէք ի բարձուէ ժայռին
Երբ արեգական նըշոյլը հըրեղէն
Դէզիսի գրկաց մէջ խորատուզին,
Հոն՝ հսկայ լեռան թաւուտ գագաթէն
Լուսինն՝ որ անձայն վեր բարձրանալով
Մըթին գիշերուան թուխ ճակտին վերայ
Լուսոյ թափանցիկ քօղ մի սփռելով
Ջուրին մէջ սուզէ իւր շողքն արծաթեայ:

Հոն՝ ի տեսնութեան անդորր՝ անշունջ,
Այն դարեւանդաց, ծաղկանցն համառփեւ
Ի լուր նուագացն այն սիրամիմունջ
Որ մամուլն մէջէն կը մնջէ գեփիւն,
Եւ կոհակներու հառաչին տրտմիկ,
Հոգին անծանօթ յուզմանց երթակայ
Մոռնալով զհամայն, զայնարհ ըզմարդիկ
Կարապաց նըման ի վեր կը պանայ:

Հոն՝ աստուածային խանդով առլցուած
Այն անծայրածիր երկնիցն յանդիման
Մարդ վըսեմագոյն արարած մ'եղած,
Ի բաց վանելով բազմանքներն ունայն,
Երկրային վտերն թողով ի յերկրի,
Մի ապառաժի յեղեր զովագին
Կը տենչայ ապրիլ համայնից հեռի
Միայնակ ընդ բնութեան և ընդ Արարչին:

Այս վշտաց հովտէն անխոյթ անցնելով,
Պըրուհեաց նագանքն՝ ոսկին մեծատանց,
Բռնաւորաց նենգն արհամարհելով,
Փոխան գահայից ու ոսկի պոսակաց
Երկնից խնդրելով սիրամունջ քնար,
Իբրեւ անտառաց թռչնիկը աղուական
Որ զայնայնելով կ'իյնան նետահար,
Հոն՝ երգոցն ի նուագ սպասել մահուան:

ՏՓՂԻՍԷ Ի ՍԴԱՎՐՈՒՄ

Պ. ՊԼԱՆՇԱՆԻ ՈՒՂԵԻՈՐՈՒԹԵՆԷՆ ՔԱՂՈՒԱԾ



1887 ապրիլ 18/30ին Տփղիսէն կը մեկ-
նէի, հինգ ու կէս ամիս հոն բնակելէ յե-
տոյ: Բայց հոնկէ մեկնելէ առաջ, գուցէ
ներուի ինձ պատմել թէ ինչպէս հոն հա-
սած էի:

Սէքսանդր Պարիսի ինքն իշխանէն հը-
րաւիրուելով իրեն ընկերանալ ի Կովկաս,
երբ ինք իւր շառքերէն (փոխարքայի) պաշ-
տօնն ստանձնելու կ'երթար, Նիժնի-Նով-
կորօտի մօտ հասած էի իրեն . . .

Կասպից ծովուն վրայ կարճ եւ յաջող
ճամբորդութենէ մը յետոյ, ելած էինք
Բէդրօվսքի, ուր առաջին անգամ ոտք կո-
խեցի Կովկասի հողին վրայ . . .

Վերելութիւն մ'ի Գոռօնայ, ուստից կը
տեսնուի Տաղիստանի լեռնաշղթային մէկ
մասն, այն որոյ վրայ Շամիլ դեռ կը տի-
րէր, փայլուն սկզբնաւորութիւն մ'եղաւ
փառաւոր ընդունելութեանց այն երկար
ցուցակին որ պիտի ընկերանար իշխանին
մինչեւ Տփղիս: Տէմիր-խան-Շուրու, Տէր-
պէնա, Գուպա, Պաքու, Շամախի, փայլե-
ցան խիստ հետաքրքրաշարժ հանդէսնե-
րով . . .

Շամախիէն սկսեալ, թշնամի երկրի վը-
րայ էր որ մեր ճամբորդութիւնը շարունա-
կած էինք, միշտ Լէզկիստանի միանգամայն
պաշտպանողական եւ յարձակողական ռազ-
մագծին յառաջագորաց մօտէն: Նոյնի,
այդ բաղադր որ կարծես անտառի մը մէջ
ցանուած է, Գախ, Զաքաղալ, Լակօտէխի
կոյս անտառաց մէջ հաստատուած այն բեր-
դերն, իշխանին ներկայացուցին, իրենց
թիղանօթաց եւ քաջ պահապանաց պաշտ-
պանութեան ներքեւ, խիստ զուարթ եւ
ինքնատիպ զինուորական հանդէսներ: Քվա-
րէլի մէջ, ուր կը սկսի Վրաստան, 200 իշ-
խանք եկան շառքերէն ընկերանալու պա-
տիւր պահանջել . . .

Դէլաֆէ սկսեալ մեր հետեւողք, որք
մեր ապահովութեան համար ընկերակցած
էին մեզ, ա'լ պատուոյ հետեւողներ եղան
մեզ համար: Վրաստան Քրիստոնեայ է,
բնակիչք քաջ ու քաղցրաբարոյ են, եւ ի-
րենց համար յաւիտենական պատիւ մը պի-
տի ըլլայ սա պարագայն թէ այսչափ դա-
րերէ ի վեր պահպանած են իրենց ազգու-
թիւնը, կրօնքը եւ հաւատքը, չըջապատ-
եալ լինելով մահմետական պետութիւննե-
րէ, որք քանի քանի անգամներ փորձած
են տիրել այդ գեղեցիկ երկրին, զոր թէեւ
յաջողած են մոխրով եւ արիւնով ծածկել,
այլ երբեք չեն կրցած նուաճել:

Մախրաւան վերջին տեղն է ուր կանգ
առինք, երկրորդ օրը կը հասնէինք ի Տփ-
ղիս, ուր յիշաւ յայտնական մուտք մը կը
սպասէր Պարիսի ինքն իշխանին:

Քաղաքը մտանք խուսն բազմութեան
մը մէջէն որ հին թաղին նեղ փողոցները
կը ընտր, ուշ դնելով որ հեծած խաղախ
ձիուս ոտքերուն տակ չը ճգմէի անխուհեմ
հետաքրքրներ, եւ այս ալ յոյժ դժուար
գործ մ'էր, մ'անգամայն կը դիտէի տանց
դուրս ցցուած պատշգամներն, ու հարթ
տանիքներն, որք լի էին կանանց եւ տղա-
յոց խուսն բազմութեամբ, այն գեղեցիկ
վրացուհիներով զորս քօղարկեալ միայն տե-
սած էի ի Կոստանդնուպոլիս եւ ի Զմիւռ-
նիա, եւ որք հոն կը տեսնուէին իրենց
գեղեցկութեան բոլոր փայլին մէջ: Ո՛ւր

ներ չկան մեր երկրի մէջ. ամուրիութեան
վրայ մենք կը նայինք իբրեւ ոճիր եւ կ'ըն-
դունինք զայն զլսովին հակառակ բան մը
երկրի օրինաց ու սովորութեանց: Մեր մէջ
ամուսնութիւնը կանուխ տեղի կ'ունենայ
— 16 տարեկան տղայք կ'ամուսնանան 13
ամեայ աղջկանց հետ —, բնական օրինաց
զեղծում մը չէ այս, որովհետեւ բոլոր հա-
րաւային երկիրներու մէջ սովորութիւն է
արդէն: Ասկէ վատ ծնողաց գերիշխանու-
թեան ի կիր արկունքն է ուսուցանել իրենց
զաւկին եւ հարկադրել զայն որ իւր երկ-
տասարդութեան զօրութիւնն ու աւելի
նուիրէ միայն տան եւ ոչ զայն դուրսերն
յանպէս վատնելու սովորութիւնն ունե-
նայ: Տղու մը համար իւր ծնողաց իրա-
ւունքն է կնիկ մը ընտրելն եւ սա չտեսներ
իւր ապագայ եւ որոշեալ հարսն ամուս-
նութեան օրէն առաջ: Մնողքէ աւելի ո՞վ
յարմարութիւն ունի հարս մը որոշելու:
Սիրահարութիւնն որ սովորութիւն մ'է յա-
րեւմուտս, Չինաստանի մէջ անծանօթ է
բոլորովին: Սորա պատճառ, որչափ որ կըր-
նամ գիտնալ, սա է թէ եւրոպացի ծնողք
ամեն պատասխանատուութենէ ազատ կը
հանդիսանան իրենց զաւակաց ամուսնու-
թեան խնդրոյն մէջ, եւ հետեւաբար կը
բաւականանան իրենց զաւակաց ընկեր մը
գտնելու պատեհութիւնը միայն տալով:

Քրիստոնէութեան վրայ խօսելով ըսած
է ատենախօսը թէ Քրիստոսի ծնած ժա-
մանակներն իրենց Հան թագաւորը պատ-
գամաւորներ զրկած է ի Պաղեստին կամ
յԱրաբիա յարաբերութիւն մը հաստատե-
լու համար արեւմտեան ազգաց հետ հա-
ւատքի մասին. եւ կը կարծեն թէ Փրկչի
ծննդէնքէն քիչ վերջ արեւելքէն եկող երեք
խմաստուն մարդիկը Չինաց պատգա-
մաւորներն են եղեր: Այս մասին ուրիշ
մանրամասնութիւնք չեն հրատարակած:

Յեղափոխականութեան վրայ խօսելով
ըսած է զօրավարը թէ «Մեր մէջ հասարա-
կաց կարծիքը միայն կրնայ ուղղել որ եւ է
սխալ: Չինական առած մը կ'ըսէ թէ «մար-
դըս աւելի լաւ է չուն ինիլ եւ խաղաղու-
թեան մէջ ապրիլ, քան մարդ իբր յեղափո-
խական»: Ասկէ ալ մարդիկ պէտք է դա-
տեն թէ Չինացիք տգէտ չեն եւ մանա-
ւանդ քիչ բազմաթիւ ետմը մէջն մի ան-
գամ մեր բազմութիւն ժողովրդեան կըրնայ
կարգաւ ու գրել»:

Չինաստան հրաշալի երկիր մը լինելու
է, քանի որ, ըստ ատենութեան զօրավարին,
հոն ոչ նօտարներ կը գտնուին եւ ոչ փառ-
տարանք: 460,000,000 ժողովուրդ և ոչ մի
փաստարան . . . Կերեւի թէ սոցա երկ-
րին մէջ չատ քիչ անգամ կը պատահին ըս-
տացուածքի, ոճրագործաց եւ այլ տեսակ
դատեր որոց ծովն է դարձեր արեւմտեան
աշխարհը: Երկրագործութեան վրայ խօ-
սելով ըսած է ատենաբանը թէ այդ յա-
տուկ ճաշակաւ ու խնամով կը մշակուի եւ
թէ երկրի համար իւրաքանչիւր անձ 20
սէնթէ (6 զրուշի չափ) աւելի չունի տուրք
տալիք, եւ երբ հունձքերը գէշ են ու ան-
կարող է զայն մճարել, նեղող չլինիր եր-
բէք:

Հետեւեալ խօսքերով զօրավարը վերջա-
ցուցած է իւր ատենաբանութիւնն. «Եւ
տակաւին մենք վայրենի ազգ մը կը կար-
ծուինք, բայց պէտք է յիշէք որ այս բո-
լորն եւրոպացի ճամբորդներու զրպարտու-
թիւններն են: Չինաստանէ վերադարձող
մէջ մի ճամբորդ տարբեր տեսակով մը ներ-
կայացուցած է զլեզ. եւ ինչո՞ւ չէք զար-
մանար սոցա խօսքերուն վրայ»:

էին Տըզան եւ Մառիլա, այն երկու պատ-
ուական արուեստագէտներ որք մեզ ծա-
նօթացուցին Արեւելքը:

Չարմանալի ցանկ մը պիտի կազմուէր
եթէ թուէինք զմեզ շրջապատող զանազան
ցեղերն: Աւելիք թաթարական քաթախին
եւ պէշմէնին, զորս հաւասարապէս կը կրեն
լեռնականք եւ կանոնաւոր խաղաթիւր, եւ
Պարսից ծաղիկոյրի ձեւով սրածայր զըլ-
խարկին, կը տեսնուէր Հայոց եւ Վրաց կո-
նածեւ քաթախը, ուստի վաճառականին ազ-
գային գլխարկն եւ խլիւսն: յետոյ Վով-
կասեան պաթախ, Սիւրի հետեւորդաց եր-
կայն շրջագոյստն: Երբեմն Բաքաի մը, իւր ի
Պարսէ ուխտագնացութեան համար ճամ-
բայ ելած, Պոմպայի շրջակայից հարթ-
փաթթոցը կը ցուցնէր: Փոքրգեր եւ մի
բանի Թուրքեր կը խառնուէին խուժանին,
որմէ վեր կը բարձրանային, չուկայի հրա-
պարակին վրայ ուստից կ'անցնէինք: Ասիոյ
ծանրաշարժ ուղտերուն զլուխներն, կարծ
սրունքով, թաւ կուրծքով եւ խորաջամու-
կութիւն ձեւացունող կրկին կուզով: Իգա-
կան մասը, մեծաւ մասամբ Վրացուհիներ-
է եւ Հայուհիներէ եւ հետեւապէս քրիս-
տոնեայ կիներէ կազմուած, որք կը վայելէն
երեսարաց ճեմելու մենաշնորհն՝ որ արեւ-
ւելեան կանանց մէջ այնքան հազուադիւ-
սէ, աչաց կը ներկայացուէր Խաթաբաթի
կոչուած այն չքնաղ գլխանոցը, տեսակ մը
պարոնական գլխադիր լայն ժապաւէնով
մը կազմուած, ուստից կ'իջնէ սակիէ կամ
արծաթէ թիթեղներով զարդարուած թե-
թեւ քօլ մը, ինչպէս նաեւ մարմաշի կտոր
մը որ, ականջին ետեւէն անցնելով եւ կը-
զակին տակէն դէմքին ստորին մասը շրջա-
պատելով, կարծես միջնորդ մ'է ընդ մէջ
այն քօլին որ ատենք բոլորովին կը ծած-
կէր դէմքը եւ նոր ստացուած մենաշնոր-
հին: Փայտուն գոյներով շրջագոյստը, ի-
րենց բոլոր երկայնութեամբ ճեղքուած
թեւերով եւ տակէն նշմարել տալով մե-
տաքնեայ հարուստ կերպաններով զգեստ-
ներ, մէջքը կը սեղմեն լայն ժապաւէնով
մը, որ կը նմանի սովորաբար Խաթաբաթի
ժապաւէնին եւ որոյ երկար ծայրերը ալե-
ծածան կը կախուին, կամ Կովկասու ու-
կերչաց շինած սեւակիտուած արծաթէ
գօտիով մը, որմէ կախուած են փոքր դա-
շոյն մը եւ զարմանագործ տարճանակ մը,
անշլաս գէնքեր, զորս սակայն իրենց գեղե-
ցիկ տիրուհիները կրնան ի հարկին փոխա-
նակել այն աւելի մահաբեր գինուց հետ
զորս կը կրեն արք, որք երբեք վարչէն
դներ զանոնք*):

Մեր գալուստէն մի քանի օր յետոյ, Ս.
Գէորգի տօնին առթիւ, Պարիաղինսքի
իշխանը պալատին զով պարտիզին մէջ կը
հաւաքէր այդ պատուանշանը կրող բոլոր
ասպետներն, եօթ հարիւրէն աւելի. զօ-
րապետներ, սպայներ եւ զինուորներ: Այս
թիւը զարմանալի չէ: Կովկասի համար, ուր
քաջագործութիւնը կարծես ամենօրեայ
դարձած են: Ճաշն եւ սպասն ամենուն
համար նոյնն էին անխտիր. յետոյ զինուո-

*) Վերջին պատերազմին ժամանակ, ուստի ըս-
տալին Ասիոյ մէջ պատերազմած տոնն, Տաթեան
իշխանուհին, Մինկերիոյ թագաւորին սյրի կինն եւ
իւր որդւոյն, Ալեքսանդր Տաթեան իշխանին խնա-
մակալուհին, խմբովին ապստամբեցուց իւր հպատակ-
ներ, թուրք բանակին դէմ հանելու համար զանոնք,
եւ ամբողջ պատերազմին ժամանակ իրզախեց միշտ
իրենց գլուխն անցած: Ուստի Ս. Աննայի մեծ ժա-
պաւէնն եւ Ս. Գէորգի զինուորական շքադրամը կը
կրէ որ միայն քաջագործութեանց համար կը տրուի:

րական երաժշտութիւնն իւր զուարթ շե-
տերը լսելի ըրաւ եւ Լեւզնիքս պարն սկը-
սաւ: Գութու-Տէրէի եւ Պաշ-Կէտիզէրի
յաղթական (Հոյազգի) իշխան Պէհլուզօֆ
քաջ զօրապետին հետ կը ստորագրէ սեղան-
ներուն շուրջ: Երբ զինուորաց խումբ մը
մօտեցաւ իրեն. իսկոյն, իւր զինադու-
թեան հակառակ, իւր նախկին զինակից-
ներն իրենց բազուկներուն վրայ բարձրա-
ցուցին զայն եւ, երբ անգամ վեր վար
ընելէ յետոյ, ականածութեամբ գետինը
կանգնեցին զայն. ականատես կը լինէի
տեսակ մ'ասպարահանութեան:

Մեծ պահոց սիւրբն, Ներսէս Վեհա-
փառ Կաթողիկոսն, Հայոց Պապը, խոր ծե-
րութեամբ մեծաւ ճամբորդութեան մը
միջոցին ի Տիգրիս: Այս առթիւ ականատես
եղայ յուզարկաւորութեան չքնաղ հանդիսի
մը: Արդէն քանի մ'անգամ պատիւ ունե-
ցած է ի տեսակցիլ Կաթողիկոսին հետ, եւ
ուզեցի իրեն մեծարանաց վերջին հաւատ-
տիք մը տալ իւր յուզարկաւորութեան հան-
գիսին ներկայ լինելով: Արարողութիւնը
տեղի ունեցաւ Հայոց վաղեմի եւ սուրաց.
եւ Կաթողիկէին մէջ, որ կը կանգնէր Կուր
գետին մօտ հին Տիգրիսի մէջ. յետոյ պատ-
կանելի հայրապետին մարմինն իւր վերջին
բնակարանը տարուեցաւ, էջմիածնայ վան-
քը, Ներսէսայ մօտ, Արարատ լեռան ստո-
րոտը: Հայ Կաթողիկոսաց սովորական բը-
նակավայրն, իրենց հայրապետական ա-
թոռն եւ թաղման տեղին:

Կրնամ նաեւ պատմել իմ Տիգրիսի յիշա-
տակներու մէջէն այնուականաց եւ ապա
Խաթաբային եւ վաճառականաց կողմէ տրուած
պարահանդէսներն ի պատիւ Պարիաղինսքի
իշխանին: Վաճառականաց պարահան-
դէսը տեղի ունեցաւ հարուստ հայու մը,
Արծրունի գնդապետին՝ նոր շինել տուած
մէկ խանին մէջ, ուր դեռ բնակութիւն չէր
հաստատուած: Երկու պարահանդէսներուն
տարբերն մի եւ նոյնն եղան, եւ եթէ Կով-
կասեան համագոյստ կրող բազմաթիւ այ-
րեր եւ կիներ չգտնուէին անդ, մարդուս
անկարելի պիտի ըլլար ինքզինք Ասիոյ մէջ
կարծել: . . .

Յաջորդ երեկոյին, Սեպտեմբըր հասայ
Եկատերինօկրատէն եւ Կիօրկեսքէն անց-
նելով, եւ հոն կուտայի վերին ողջոյն
մ'այդ կովկասեան հողին, ուր գտած էի
յոյժ մարդասէր ասպնջականութիւն մը:

Թարգմ. ՄԻԲԱՅԷԼ Յ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՊՈՒՆՅ ՎԱՆՔ ԵՒ ԻԻՐ ՅԵՇԱՏԱԿ

Ա.

Տղայ էինք դեռ, զսրտցական անմեղ
պատանիք, ամեն մեծ պահոց մեր եկեղե-
ցիներէ մէջ կը շրջեցնէին այն սրբագործ-
եալ Ս. Նշանները՝ որոց անունն եւ յիշա-
տակը կը վառէր մեր ժողովրդեան հաւա-
տոյ կրակը:

Օր մը՝ Նշանաւորագոյնն սպահոց նուի-
րական օրերէն, Մաղիաղարդի շաքաթ օրը՝
Ղազարու Յարութեան տօնի երեկոյ, մեր
ժողովուրդը՝ Ջատիկի մօտալուտ գա-
լտեան հետ՝ Աստուածորդւոյն յ'Երուսա-
ղէմ մտնելու նախատեսակն՝ ուսեան նորա-
բողոք ոստերով տօնելու համար՝ միջին-
ներէ շրջայի նման եկեղեցիները կը խըռ-

նէր, ծերն իւր ալիքներով, երիտասարդն
իւր աշխուժութեամբ, հարսն իւր համես-
տութեամբ, ժրաջան տան արկիւնն իւր բա-
րեսրտութեամբ, պատանին իւր ուշիմու-
թեամբ եւ կոյսն իւր գեղեցկութեամբ:
Մաղիաղարդի գեղուղէ ծառերի հետ ծը-
լած ու ծաղկած, մեր երկիրը ողջունող
զարնան սիրակարօտ թաշուհներէ նման
խառն ու երամովին մեր սարգ եկեղեցւոյ
անրիժ տաճարը զետեղուած էին, այնպէս
որ ասեղ ձգելու տեղ չէր մնացած ինչ-
պէս սովոր են ասել: Ամեն օր, իւր սիրտը,
մարդկութեան այն ներքին տաճարը՝ յօ-
ժարութեամբ բանալով՝ անմուռն կը մըր-
մընջար թաղաւոր գոլով բոյաշխարհն,
հոգւով եւ մտով վերացած: Անդին, աւագ
խորանի աջակողմեան տաճարի վրայ դըր-
ուած ու ոսկեճամուկ ծածկոցներով առ-
փոփեալ Ս. ծրարին առջեւ կը վառուէին
զոյգ մ'անշամանդաղ լոյսեր՝ ոյց արձակած
ճառագայթներն իրենց խառնուտիկ պալը-
լումներով՝ արեւմտեան պատուհաններէն
ներս թափանցող արեւի ոսկեղոյն շողերի
հետ՝ այդ տօնի խմստը գեղեցիկ իմն մեկ-
նելու հանգամանքն ունէին: Ժողովրդեան
սիրտը հոն կը ձգուէր միշտ, առ այն պաշ-
տելի ծրարն, որ կը կրէր անուն մը յոյժ
քաղցր եւ յաւէտ մօտ նորա սրտին:

Ընկերներէս միոյն՝ որ բովս կայնած էր
բուռն հոգեզմայլմամբ մը, կամացուկ մը
հարցուցի այդ Ս. Նշանի անունը:

Դա՛, «Պոռայ Նարեկեցին է» տալ ինձ
մեղմիկ եւ շարունակեց իւր հրեշտական
մրմունջը: . . .

Ահա՛ նոյն վայրկեանն ազդեց այդ տ-
նունը մի պա տելի համակրանք եւ թողոց
հոգւոյս անմուռնալի յիշատակ: . . .

—Այո, ինչ հոգեկան վեհութիւնն եւ
ազդեցութիւնն կը կրէ մարդն, երբ հեռու
աշխարհային ամեն մտածումներէն ու դար-
ձուածներէն, իւր հարց ու նախահարց ար-
եամբ նուիրագործեալ տաճարի մէջ կայ-
նած կը լսէ զոր զշնորհս աստուածային
առ ի վերուստ իջեալ յերկնից պարգեւեցեր
հիստիսանաց եւ շարականի գողտրիկ
քնարաւ երգուիլն ու կը դիտէ այն պաշ-
տելի հօր մասունքի վերաբերման թափօր՝
զոր քահանան երկու ձեռքով իւր գլուխէն
վեր բռնած՝ մոմերով ու բուռն վառա՛ ժո-
ղովրդեան հանդէպ կը բերէր կը բանար:
Այրող ժողովուրդը խիստ սրտաբուխ հա-
ւաշանօք ոտքի վրայ՝ բազկատարած մալ-
թանօք՝ առաքէր առ նա բուրվառաւ կա-
մաց ըզմից ձենձերմամբ զաղերս հառաչա-
նաց, Ո՛վ հայր մեր հարց եւ սպակ հայ
փառաց, լո՛ւր մեր պաղատանաց:

Այս յիշատակի քաղցր տպաւորութեան
ներքեւ շաք մեծ հաճոյքով կայնած կըզ-
մայլէի այն ջերմեանդութեան վրայ որ
կը ձգէր մեր բարեպաշտ ժողովուրդը «Հա-
ւատով եւ երկիւղիւ» ի համբոյր նոյն Ս.
Նշխարին ու չխնայել սրտերնէն բղխած
լումանին: . . . Եւ այդ օրինակին երբ կը
հետեւէինք մենք, ուխտեցինք անձամբ
տեսնել այն հաստատութիւնը՝ ոյց ներկա-
յութիւն փառք կը ներշնչէ հայուն: . . .

Բ.

Բաղէշի հիստիսային արեւելեան ար-
ուարձաններէն մին՝ մէկ ու կէս ժամ բա-
ցակայութեամբ գեղեցկատեսիլ անտառ-
ներով, նորափթիթ կոյսի մը նման պճնեալ
լեռանց զրախտատեսիլ հովտի մը մէջ 40-
50 տուն հայ գիւղացիներով շինուած է
Պոռ գիւղ:

«Քանի» տարօրինակ է հոս ժողովրդեան կեանքի ներքին պատկերն՝ համեմատութեամբ բնութեան արտաքին երեւոյթին։ Գալտն իր գեղեցկութեամբ, արտն իր արգասաւորութեամբ, անտառն իր մոգականութեամբ, լեռն իր վեհմութեամբ, օդն իր թարմութեամբ, ջուրն իր անմահականութեամբ ու ծաղիկը ու թռչունը իրենց եղբմական բոյրերովն ու նմանակներով երբէք չեն ամբեր այն ցաւն, եւ այն դժոխային կիզիչ տխրոյ՝ որ սահմանաւոր է կուլ տալու անոնց կեանքը։ Այս տխուր եւ յոռաբեկ երեւոյթի ներքեւ խաղողի ողկոյններն նման ճմլուղ ժողովուրդի մը սիրտ եթէ բանաք ու կարգաք, ա՛հ, սեւ տողերով ինչե՛ր պիտի տեսնէք, ու այն տեսն դուք ալ, Տանդէի դժոխքի դիրքէն վար պիտի նկատէք այդ վայրն որ անծանօթի մը համար երանութեան դրախտ պիտի համարուի։

Մեր մէջ, ամենամեծ դժբաղդութիւն մ'ալ սաստիկ ցաւ զգալ եւ բնական օրինակ հակառակ լաց չկրնալ լինիլն է, եւ ահա՛ այս տարաբաղդութեան ներքեւ, որքան խուլ հառաչանաց հեղձամղձուկ ձայներ՝ որոնք իրենց վիճակի մէջ մնալով կը լրատեն ժողովուրդ մը եւ ունայնութեան կը դատապարտեն կեանքն ու իր հանդամանքները . . . :

Երբ ժողովուրդ մը նիւթական տեսակէտով դատապարտուած լինի տխուր մի կացութեան, բնական է որ մտաւոր եւ բարոյական վիճակաւ ալ սաստիկ մ'ետ մնացած կը լինի։ Այս տխուր ճամբարութիւն այնքան իրական է, որքան դառն այդ ժողովրդեան ներքին եւ արտաքին կացութիւնն։ Հոս միտքս կուգայ շնորհ հասկաց այն առածը թէ «վաւարանին մօտ եղած առարկայները աւելի շուտ կը վառուին»։

Մեր երկիրը իր կենսական ոյժերէն մերկացնող խորշակներէն մինն ալ՝ ժողովրդեան ամեն դատապարտութեան մէջ տիրող աւերիչ պանդխտութիւնն է, որ իր հոսանքներով կը սպառնայ երկրի ներքին զարգացման մեծ կորուստ։ Կորուսեան այդ ահւելի վիճակն՝ իր դժոխային ճանկերի մէջ որած է նաեւ գիւղիս տանց թիւերէն վեր անհատներ, որոցմէ չատերի անոք եւ անտէր ընտանիք, զաւակներն ու ծնողք՝ անգութ վաշխառուի եւ անսիրտ աւատտպետի ճիրանների մէջ կը հեծկտեն դառնալին։

Սիրտ ունենալ եւ չզգալ, լեզու ունենալ եւ չըրուցել, ձայն ունենալ եւ խեղդել, մեր ճակատագրի յատկանիշն է, եւ այդ ճակատագրի երբ լուծեան կը տանի ամեն բանն՝ միթէ՞ դա եւս անիծից մի տեսակը չէ՞ . . . :

Ժողովրդեան զբաղմունքն հոս՝ երկրաւորածական պարագմանց հետ՝ թեթեւ անանաբուծութիւն է, սակայն պատճառներ կան որով աղոնը շատ ետ կը մնան։

Հնութիւնք հոս անպակաս են, իրենց մարմնով ու բեկորներով։ Գիւղի հիւսիսակողմը փայլող սրբատաշ բարերէ կերտեալ կամարակալ Ս. Գէորգ անուն եկեղեցւոյ աջ թեւին ներքեւ կը յանգի համանուն ուրիշ տաճարի մը կամարն։ Այս երկու տաճար տաճարների միջեւ կանգնուած կան մէկ քանի (5-6) հատ 3-4 կանգուն երկայնութեամբ եւ կէս կանգուն վեր թանձրութեամբ միակուր փխրաքարերէ կոթողներ կամ մահաբաժաններ, որոնք 3-4 դարու մօտ տարեւորութեան բեռան հետ կը կրեն

իրենց վրայ ճարտար մատներէ՝ քանդակեալ զանազան զարդեր եւ խաչեր՝ իբր արդիւնք քանդակագործութեան միջին դարու հայ ճաշակի։

Անդին՝ բլրակի մը վրայ կը տեսնուի կոյտմը կրաքարեր, եւ կը յորջորջուի «թուխ մանուկ»։ Հոս ծառերով ու ծաղիկներով շրջապատեալ քաղցրահամ աղբիւրիկ մը կը կրէ «քառասուն մանկունք» անունն։ Անկէ ո՛չ նուազ հեռու՝ պուրակ մը դարաւոր հաստարուն եւ բազմաոստ տխրեւոյթ կաղնիներով՝ զորս կը կոչեն «Ս. Սարգսի ծառեր»։ Որքան առատ են այս գոռակ յիշատակը եւ վրայք մեր երկրի ամեն վայրերի մէջ։ Չկայ գիւղ մը, որ չունենայ մեր կրօնի եւ եկեղեցւոյ անցեալի ուրուականն ներկայող հնութիւն կամ աւանդութեան մը։ Ո՛րչափ բարձր եւ գեղեցիկ լինեն՝ ոյց վրայ կը փայլին հնութեան եւ հայութեան ճրագներ։ Նիւթեր կան, երբ մարդուս միտք կուգան, տարօրինակ յուզմանց եւ մտածմանց ուղիւն մը նորա առջեւ կը բանան։ Եւ միտքը իւր բոլոր մագնիսականութեամբ այդ անեղբ հորիզոնէն կը վերամբարանան։ — Ո՛րքա՛ն՝ Մտածողների եւ պատմագէտների երեւակայական մտապատկերների հանդէպ . . . :

Գ.

Պռայ արեւելեան կողմէն՝ Ազնուածոր զաւառի, Կամախ հայ գիւղի եւ առաջնոյն միջեւ անջրպետ բարձրացող «Իշկուին» չըբնաղ լեռան գեղատեսիլ օղակաց ստորոտը՝ ծառերով ու տկներով զարդարուն բնատիպ գեղեցկութեամբ օժտեալ դարաւոր մի վրայ՝ տասն վայրկեանի մօտ հեռաւորութեամբ կառուցուած է Պռայ Ս. Նարեկեցւոյ վանքը։

Բնութիւնն իր հոգեզմայլ գեղեցկութեան բուռն ոյժով կը փայլի հոս։ Տարւոյ երեք եղանակները իրենց այլազան բարեքներով ու բերքերով հիւսքանջ երեւոյթով մը կը պնեն այս վայրերն։ Ամեն կողմ հըրապոյր եւ ամեն առարկայ անուշ բոյր մ'ունի։ Երկինք անուշ, երկիրն անուշ, օդն անուշ, ջուրն անուշ, ծառերն ու ծաղիկները բնուշ։ Իսկ մարդն՝ որ կը բնակի հոս, եւ երբ դեռ հեռու ես այդ գիւղէն ու վանքէն ու անձանթ են քեզ երկրին ներքին խաւերը, կարծես թէ աշխարհի մէջ ամենէն երջանիկ մարդն է։ Սակայն երբ ներս կը մտնես, ու զգայնութեամբ մ'իրերը կը հետաքոտես, շատ սլարդ և մէկին կը նշմարես որ բնութեան այդ ամեն փառքն ու վայելք կը թռչն լինի դառնութեան մի բեռ . . . ո՛վ ոսկեղոյն պատրանք . . . :

Վանուցս տաճարը՝ յունական ճաշակաւ և կոթածոյ ամուր բարերով կանգնուած է, մէկ քանի աւեր եւ ամալի խցիկների եւ գոմերի արեւելակողմը։ Վերին աստիճանի անկանոնութիւն եւ կեղտոտութիւն մը կը տիրէ այս հաստատութեան նիւթական եւ բարոյական վիճակի մէջ։ Բուռն տաճարն որ իր հասակի երեւոյթէն՝ մօտ 8-9 տարու կեանքի մը բեռան ներքեւ՝ պնդակալով եւ հրացայտ ծերունոյ մը նման՝ իր ճակտի խորշմներով բիւրաւոր աղէտների եւ արհաւիրացի խաղաղից յայտնի կը ցուցնէ։ Եւ տաճարի հանդէպ եղող «Ժամատան» կամ «Գաւիթ» (որ կերտուած է սրբատաշ քարերէ բաղկացեալ զոյգ մը սեանց անընկճելի դիմադրութեամբ) արեւելեան կողմը կը բացուի այն գոլտրիկ տաճարի նեղկիկ

դուռն ուր սրբութիւն սրբութեանց օրինական կը վառուի քառութեանց հուրն։

Նկատմի աղբիւրք են այս վանուց նորա շուրջն ու բոլոր պարփակող տառնաւոր տառերի հետ՝ ընկուզի ծառերն ու ոչխարաց ձմերուան պաշարի համար թաւ հասցնող պրակները։

Վանքս ունէր 40-50 հատ ոչխարներ, չորոցք (չորս հատ) մը եղներ, մէկ քանի կովեր ու դուարներ։ Սորա վանահայրութիւնն դարձած է տեսակ մ'անիշխանութիւն, երբեմն տեղացի Տ. Յարութիւն աշխոյժ քահանային եւ երբեմն օտար վարդապետի մը խնամոց ներքեւ կ'ապրէր այս շէնքն։ Այժմ՝ կը լսենք որ վերջնոյն տարադէպ մահուամբ կը միտի լինել քառս մ'անկերպարան։

Ծածկենք մեր տեսութեանն սոյն եւ նման հարեւաւոր կարեւոր հաստատութեանց տխուր կացութիւնները։ Սեւ վարադոյր մը թող անջրպետէ այդ երեւոյթին եւ մեր մտաց միջեւ։ Դուրս դառնանք Պռայ վանքէն՝ այն զգացումներով, որոնք թողած են մեզ տխուր եւ զուարթ յիշատակներ։ Ներքեւ նստինք այն քաղցրատեսիլ ուռենեաց յանկուցիչ հովանեաց ներքեւ ու վայրկեանական զուարթ տպաւորութեամբ մ'ուրուագրենք հոս անցուցած Համարձման քօնի մ'անմոռանալի յիշատակը։

Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

ՄԺԵԺ ԳՆՈՒՆԻ

Զանց ընելով աւելի քան կէս դարեան միջոց մը, յորում երեցան այլ եւ այլ հասակի զօրապետներ յունական բանակի մէջ, կը հասնինք 668 թուական, երբ Բիւզանդիոնի կայսր Կ'ընտրուի երկրորդ հայազգի ինքնակալն։ Հերակ կայսեր թոռը Կոստանդ կայսրը սաստիկ առեւի դառնալով իւր հպատակաց իւր չարագործութեանց պատճառաւ խոյս կուտայ Սիկիլիոյ Սարակուզա քաղաքն իւր մի բանի իշխանաց հետ միասին, որոց մէջ կար եւ ՄԺԵԺ Գնունի, զոր յոյները կ'անուանեն ՄԵԺԻԺ կամ ՄԵԺԻԺԻՈՆ հայ։ Սա առաջ Հերակ կայսրէն կարգուած էր Փոքր Հայոց վրայ իշխան եւ զօրավար։ Կոստանդ Եօթն տարի Սիկիլիոյ մնալէ յետոյ միտքը դրաւ այն տեղ փոխադրել կայսերական գահն։ Այս առթիւ նամակ գրեց Կ. Պոլիս որ թագուհին իւր որդիներով միասին իրեն դան, սակայն տէրութեան մեծ ամենները թոյլ չտուին։ Այնուամենայնիւ Կոստանդ չի վերադարձաւ Կ. Պոլիս, այլ շարունակեց մնալ Սերակուզայի մէջ։ Մի օր բաղնիքի մէջ եղած ժամանակ, իւր սպասաւորներէն մին Անդրէաս անունով, նորա լուացուած պահուն ջուրի անօթը՝ սաստիկ ուժգնութեամբ կայսեր գլխուն զարկաւ, սպաննեց եւ դուրս փախաւ։ Կոստանդի մահուան լուրն առնելուն պէս պալատականք եւ զօրք կայսր կ'ընտրեն զՄԺԵԺ Գնունի։ Եւ կը գոչեն «Կեցցէ կայսրն ՄԺԵԺ»։ Թէոփանէս եւ այլք կը գրեն թէ ՄԺԵԺ զէմքով վեհափառ և անձնեայ մարդ մ'էր եւ սովորական մարդոց կարգէն դուրս հրաշագեղութիւն մ'ունէր։

Կոստանդի որդին Կոստանդին Պապոն նառոս իմանալով իւր հօր մահն եւ ՄԺԵԺի

կայսր լինելն, իսկոյն կը ժողովէ բազմաթիւ զօրք եւ կ'արշաւէ Սիւլիւիա, կը յաղթէ Մծեթին եւ իւրայիններով կը բերէ Կ. Պոլիս, ուր կ'սպաննէ կալանաւորներն եւ նոցա հետ միատեղ եւ նոր կայսրն՝ այն է Մծեթ Գնունին:

Յ Ի Լ Ի Պ Պ Ի Վ Ո Ս

Սորա մասին պատմութիւնը բաւական չփոթ տեղեկութիւններ կուտայ: Պատմաբաններէ ոմանք կ'անուանեն զնա Վարդան մականունաւոր Քառէր, սակայն ուրիշ մատենագիրներ որպէս են թէոփանէս, Զօնարաս, Կեղրանոս, Գրիկոս եւ, Վարդան Քառէր մականունաւոր կայսրութեան ժամանակը կը դնեն 802 թուականն այսինքն մօտ 100 տարի յետոյ: Այս պղտոր կէտը թողով հմուտ պատմագէտներուն, այստեղ միայն հարկ է յայտնել թէ մատենագիրներէ ոմանք Ֆրիպպիկ կայսրը կը կոչեն Վարդան եւ ոմանք կ'ըսեն թէ Վարդան անուն հայու մը որդին էր: Ֆրիպպիկոսի կայսրութենէն երկու երեք տարի առաջ Զորրորդ Հայոց Վահան նախարարն, որ կը գտնուէր Յունաց հնազանդութեան տակ, ձանձրանալով Հագարացոց յաճախակի յարձակումներէն, նոցա իշխանութեան տակ մտաւ, որովհետեւ յոյներն հարկ եղած պարագային չէին օգնիր իրեն: Ֆրիպպիկ իւր կայսրութեան միջոցին վերստին նուաճեց Զորրորդ Հայոց, եւ բազմաթիւ հայ ընտանիքներ գաղթել տուաւ այն տեղ երկրի պաշտպանութեան համար:

Այժմ որդի դարի սկիզբէն եւ տակաւին շատ առաջալ Յունաց կայսրերէ ոմանք մասնաւորապէս ծանր հալածանք կը հանէին պատկերապաշտութեան դէմ, աշխատելով պատկերներու գործածութիւնը վերջացնել եկեղեցւոյ մէջէն: Այս պատկերամարտ կայսրերէն նշանաւորագոյնն հանդիսացաւ Լեւոն հայկազն կայսրն, որ շատերէն անուանեցաւ Գերաբարտոս: Թողով Լեւոնի պատմութիւնն իւր կարգին, ըսենք այժմ թէ 741ին Բիւզանդիոնի վրայ կը թագաւորէր Կոստանդին Կոպրոնիմոս, որ պատկերամարտութեան եւ իւր ապիրատ գործերու համար զգուշի եղաւ ամեն մարդու: Թէոփանէս կը գրէ. «Ո՛վ կարող է պատմել նորոտ չարութիւններն, որ ժանտիպէս տարածուած էին ամեն ուրեք. այս պատճառաւ առ հասարակ բոլոր ժողովուրդը կը խորշնայ անկէ»:

Թէոփանէս, սուրբն Նիկիփորոս, Կեղրինոս, Զոնարաս, եւ այլ ժամանակակից պատմիչներ կը պատմեն թէ այդ ժամանակ կար հայազգի երեւելի իշխան մը Արտաւազդ անուն, որ ամուսնացած էր Կոպրոնիմոս կայսրի Աննա քրոջ հետ, որովհետեւ Կոպրոնիմոսի հայրը Լեւոն կայսրը շատ օգնութիւն գտնելով Արտաւազդէն արժանի գտաւ զնա իրեն փեսայ ընտրելու բաց աստի Լեւոն կարգած էր զնա կիւրապաշտ եւ կոմս Ոպսկիոյ: Արտաւազդ ըստ վկայութեան յիշեալ մատենագրաց, բաջ եւ հզօր, վեհանձն եւ փառացի մարդ մ'էր. միանգամայն եւ ուղղահաւատ եւ պաշտպան սուրբ պատկերաց. այս պատճառաւ եւ Յունաց զօրքերն ու մեծամեծները խորապէս կը յարգէին զնա. Կոպրոնիմոս տըհաճելով այս պարագայէն լաւ աչքով չէր նայէր իւր բեռայրին: Այդ միջոցին Կոպրոնիմոս առիթ ունեցաւ զիմել թշնամեաց վրայ պատերազմելու: Ոպսկիոյ սահմանէն անցած ժամանակ կասկածելով Արտաւազդէն, որ անդույն կոմսն էր, սիրոյ պատ-

գամ զրկեց դաւաճանութեամբ առ Արտաւազդ եւ խնդրեց անկէ որ իրեն զրկէ իւր քրոջ զաւակները տեսնելու համար. սակայն Կոպրոնիմոսի նպատակը բարի չէր: Եւ Արտաւազդ գիտնալով կայսրն նենգութիւնը մտիկ չըրաւ նորա խօսքին: Աստ խորհուրդ ընելով իւր զօրաց հետ, ակն յայտնի պատերազմ հրատարակեց Կոպրոնիմոսի դէմ, եւ սկսաւ շատ զօրքով յարձակիլ նորա վերայ. ճանապարհին հանդիպելով կայսրի իշխաններէն միայն, որ դէմ կը դնէր իրեն, բռնեց եւ սպաննեց զնա: Իսկ կայսրն երկեղէն փախաւ ամուր բերդ մը: Արտաւազդ ընտրուեցաւ կայսր: Այնուհետեւ Արտաւազդ եւ Կոպրոնիմոս շատ զօրք ժողովելով սկսան կռուիլ կայսրութեան համար. երկու կողմէն ալ սաստիկ կռուութիւն կը լինէր:

Արտաւազդ կայսր ընտրուելէ յետոյ իսկոյն Գեսպան զրկեց Կ. Պոլիս եւ ամեն ինչ ծանոց Մոնոտ պատրիկին, որ կայսրի փոխանորդն էր: Եւ որովհետեւ Մոնոտ բարեկամ էր Արտաւազդի հետ, ամբոյսը կը ժողովէ մեծ եկեղեցւոյ մէջ եւ կը յայտարարէ թէ Կոպրոնիմոս մեռնելով Արտաւազդ կայսր ընտրուած է զօրքերէն: Այն ժամանակ համայն ժողովուրդն եւ Անաստաս պատրիարքն սկսան անէծք կարգաւ Կոպրոնիմոսին եւ կ'ուրախանային նորա մահուան համար. եւ միահամուռ ձայնիւ կ'աղակէին «Եկեցէ կայսրն Արտաւազդ», որովհետեւ Արտաւազդ արդէն իւր կոմսութեան ժամանակ ճանաչուած էր իրր բարի եւ ուղղադատ մարդ, մինչդեռ Կոպրոնիմոս սաստիկ ատելի եղած էր համայն ժողովրդեան: Արտաւազդ Կ. Պոլսոյ մէջ եւս այսպէս կայսր հրատարակուելէ յետոյ Մոնոտ պատրիկին իսկոյն փախել տուաւ քաղաքի դռներն եւ անցքերն, ապա ձերբակալեց Կոպրոնիմոսի բոլոր մտերիմներն եւ ձեռնելով բանտարկեց զնոսա:

Այնուհետեւ Արտաւազդ իւր զօրագունքով եկաւ մտաւ ի Կ. Պոլիս կայսերական մեծափառ շքով: Այս բանն իմանալով Կոպրոնիմոս շտապեց զօրք առնուլ Թրակացիներէն եւ եկաւ Խրիսոստոլիս, այսինքն արդի Սկիւտարը, սակայն ոչինչ կարողանալով ընել ետ դարձաւ եւ ձմեռեց Սիւսիոս ուր նախապէս ապաւինած էր Արտաւազդի ձեռքէն փախած ժամանակ: Այնուհետեւ Արտաւազդ հրաման ըրաւ որ ամեն քաղաքաց մէջ յայտնապէս պատուին սուրբ պատկերներն: Այս առթիւ ժողովուրդը մեծապէս ուրախանալով միաբանութեամբ հաստատեց զնա կայսր, եւ Անաստաս Պատրիարքն կայսրական թագը դրաւ նորա գլուխն եկեղեցւոյ մէջ անհուն բազմութեան ներկայութեամբ:

Մայիսին, Արտաւազդ կայսրը զնաց Ոպսկիոյ դաւառը, ճանապարհին նուաճելով Սիւսան, ըստ վկայութեան վերոյիշեալ պատմագրաց: Նմանապէս աստատակեց իւր թշնամեաց շատ դաւառները: Միւս կողմէ Կոպրոնիմոս այլ եւ այլ կողմերէ անհամար զօրք գումարելով կը պատրաստուէր արշաւել Արտաւազդի վրայ. եւ արդարեւ Կոպրոնիմոս առաջին անգամէն իսկ սկսաւ յաղթել Արտաւազդի եւ քչեց մինչեւ Կիլիկոն քաղաքն: Այդ տեղ Արտաւազդ ամբախուլէ յետոյ Կոպրոնիմոսի վրայ կը զրկէ իւր Նիկիոս որդին, որ բոլոր զօրաց սպարապետն էր, նորա հետ միասին եւ իւր ազգականներէն Տրդատ Պատրիկ քաջարի մարդ մը: Սրբա եւս կը յաղթուին, պատերազմի մէջ մեռնելով Տրդատ եւ ուրիշ մեծամեծ հա-

յեր: Ապա բաւական երկար ժամանակ Կոպրոնիմոս եւ Արտաւազդ պատերազմ մղեցին իրարու դէմ: Երկու կողմէն սպաննուեցան բազմաթիւ մարդիկ, իմասնաւորի հայեր որք կը գտնուէին Արտաւազդի բանակին մէջ: Արտաւազդ տեսնելով թէ անկարող է յաղթել Կոպրոնիմոսի, կը վերադառնայ Կ. Պոլիս: Նոյն տարւոյ սեպտեմբերին Կոպրոնիմոս բազմաթիւ զօրքով կ'արշաւէ Կ. Պոլիս եւ կը պաշարէ քաղաքը, մինչեւ որ սաստիկ սով կ'սկսի քաղաքի մէջ: Արտաւազդ մարդիկ կը զրկէ ծովով պաշար բերելու համար, սակայն Կոպրոնիմոս նորա այդ մարդիկը բռնելով կը կուրցնէ եւ այնպէս կը զրկէ Արտաւազդին: Վերջապէս երբ պաշարման դրութեան սովն հասաւ ծայրայեղութեան, այն ժամանակ Արտաւազդ դուրս ելաւ քաղաքէն եւ սկսաւ պատերազմիլ Կոպրոնիմոսի հետ: այլ վերջ տին յաղթուեցաւ: Միւս կողմէ Արտաւազդի Նիկիոս որդին որ կը շրջէր Ասիոյ մէջ, բազմաթիւ զօրք կը ժողովէ եւ կուգայ մինչեւ Սկիւտար. բոլորովին անտեղեակ լինելով թէ Կոպրոնիմոսի զօրքերը կը գտնուին այն կողմերը: Կոպրոնիմոսի զօրքերը գաղտնապէս յարձակելով Նիկիոսի զօրաց վրայ, սաստիկ կռուութիւն կ'ընեն. յանկարծակիի եկած զօրաց մնացեալ մասը ժամանակ չունենալով պատրաստուիլ դիմադրելու, կ'սկսի փախչիլ իւր պետին հետ մինչեւ Նիկիոսի շրջան: Եւ Կոպրոնիմոս չլքեց իւր կախել կուտայ զնա իւր հօր յանդիման: Կոպրոնիմոս իւր քրոջ զաւակն այսպէս անադորոյն մահուամբ սպաննելէ յետոյ ցամաքակողմէն երկրորդ անգամ կը յարձակի քաղաքի վրայ: Իսկ Արտաւազդ տեսնելով իւր զօրութեան տուրաքութիւնը, նաեւ իսկոյն կուտայ իւր նախկին իշխանութեան երկիրն Ոպսկիէ: Ապա կ'ամրանայ Պիղուի գլխակի մէջ Վաստ Պատրիկի հետ:

Կոպրոնիմոս Կ. Պոլսոյ տիրելէ յետոյ, հնարքով մը կը բռնէ Արտաւազդը, կը կուրցնէ զնա եւ նորա երկու որդիներն, ապա կարելով Վաստիկի գլուխը բարձր տեղէ մը կախած կը թողու երեք օր, որպէս զի ամեն ոք տեսնէ: Կոպրոնիմոս չգոհալով այսու կ'սպաննէ Արտաւազդի բազմաթիւ համախոհները, շատերը կը զրկէ աչքերէն, ոմանց ալ ձեռները կը կտրէ եւ ոմանց ոտներն: Այնուհետեւ կը հրամայէ զօրաց իրենց հաճոյքի համեմատ կողապան քաղաքացւոց տուներն: Իսկոյն քաղաքի մէջ զփոթութիւն կ'իյնայ եւ ամեն ոք Արտաւազդի արդարադատ կայսրութիւնը խնդրէ...

Կոպրոնիմոս այս ամեն շարիքներ զօրածելէ յետոյ խաղի հանդէս մը կը պատրաստէ Աթ-մէյտանի մէջ, ուր բերել կուտայ կուրացած Արտաւազդ կայսրը, նորա որդիներն եւ բարեկամները չլքեցողապէս որպէս զի խաղը ընէ զնոսա ձիարձակարանի հանդէսի մէջ. Կոպրոնիմոս կը կուրցնէ եւ Անաստաս Պատրիարքն որ կայսր օծած էր զԱրտաւազդ եւ էջու վրայ հեծցնելով էր հրաւիրուած զարձուցած կը հրաւիրուի ազգի կողմը դարձուցած կը հրաւիրուի այդպէս շրջեցունել թատրոնի մէջ: Աւաստիկ այսպիսի տխուր վախճան ունեցաւ Բիւզանդիոնի Զորրորդ հայազն կայսրը:

«ՄԱՍԻՍ»-Ի ՊԱՏՄԱՍԻՆՆԵՐԸ
ՖԻԼԱՏԷԼԻՅԱՆ. — Ա. ձ. 0. Ստացանք օգոստոս 8 ամսաթիւն նամակներ որմէ առաջ ու եւ գումար հասած չէ մեզ: Հաճեցէք զրկել ձեք բաժնեկիւնը:

Ք Ա Ղ Ո Ւ Ա Տ

Շ Ա Յ Ո Ւ Ս Վ Ա Ն Լ Ր Ո Յ

Օգոստոս 8 էն 14

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Թէհրանէ կը հեռագրեն առ Սահմանադրութեան (Ազգան թեկնածուն) իւր արգելարանէն փախեր է զէպի Հէրաթ, այլ կը յուսան կալանաւորել զնա :

—Ֆէրտինանտ իշխանը զնոց հաստատուեցաւ ի Սոփիա եւ գործոց գլուխ անցաւ, այլ մեծ Տէրութիւնը չեն ճանչնար զնա իբր իշխան Պաշկարիոյ, ըստ որում առանց իրենց հաւանութեան մտած է պաշկարական հոգը Ռուսիա, առաջարկած է Բ. Դրան հետեւեալ միջոցը վերջ մը տալու համար տագնապին. Էջինթոթ ուս զօրավարը միակ խնամակալ կարգել որուն ընկեր տրուելով Տատեան վսեմ Յարութիւն էֆէնտին, իբր բարձր գոմիսէր, նոր Սոպրանէի կազմութիւնն եւ նոր իշխանի ընտրութիւն կատարուի : Այս մասին անընդհատ բանակցութիւնը կը կատարուին ընդ մէջ Բ. Դրան եւ Ռուսիոյ, ինչպէս նաեւ միւս մեծ Տէրութեանց, բայց վերջնական որոշում մը տրուած չէ տակաւին :

—Բեդրապուրկէ կը հեռագրուի թէ ուս բանակին ներկայ ութը կը նուազի՝ բազմութիւն սպայից ու զինուորաց արձակուողներ տրուելով, բայց միանգամայն կը փութացուի նոր ամբարձեանք շինութիւնն ի Բոյնիս, մանաւանդ ի Լուք եւ ի Ռոմլու :

—Իտալեան նոր նախարարապետ Պ. Բրիտի տակաւին դժուարութիւն կը կրէ քաղաքին գործոց նախարար մը գտնելու. զի այն ամեն խառնակ բազմազէտը՝ որոց զիմեց ցարդ՝ մերժեցին իւր առաջարկները :

—Զօր. Կանեճըի, վերջին պատերազմին մէջ Շիրքայի կրճին Սիւլէյման փաշայի զէմ պաշտպանութեամբն հաջակաւոր, այս օրերս աչքէ անցուց աւելորդ զօրաց վաշտ մը, որ Ռիկայէ կը մեկնէր՝ հաստատուելու համար ի Վիլնա, ուստական Բոլոնիա, գերմանական ուսմանաց մօտ : Զօրավարն ըսաւ թէ կը հասկնայ որ զօրքերը՝ Ռիկայի պէս հաճելի բնակավայրէ մը մեկնելով՝ բուռն վիշտ գգան : Վայց պէտք է միտարարել. զի ձեր պատուաբեր պաշտօնն եղած է միշտ յառաջապահ լինել, վտանգին առջեւ գտնուիլ, եւ յարած ամ պատրաստ կենալ պատերազմի : Ըսել է թէ ուս զօրավարը անհաւանական չեն համարիր ուսոգեբման պատերազմ մը :

—Նեղոսի արտասովոր աճումն այս տարի ծանր մտահոգութիւն կը պատճառէ Եգիպտոսի մէջ :

—Ռուս լրագրիք կը ծանուցանեն թէ Պ. Կաթկովի թողած հարստութիւնն է իբր 70,000 օսմ ոսկի, որ պիտի բաժնուի 14 անձանց մէջ :

—Հանրածանոթ Զօր. Չէնայէվ, որ ոչ միայն ուղղափառ այլ եւ փայլուն գըրադէտ մ'է, Մատթէի վէրսապետ խմբագրապետութիւնը պիտի ստանանէ եղեր Կաթկովի տեղ :

—Հանգուցեալ Ալֆրէտ Գրիւբ միլիոն մը մարք թողուց, ի նպատ իւր գործարանի հազարաւոր գործաւորաց բարեգործական հաստատութիւն մը հիմնուելու համար իւր կուսակալ, որ կը շարունակէ գործարանը, կէս միլիոն մարք տուաւ Էսէն քաղաքին ուր է գործարանն, եւ բա-

ղարային խորհուրդն սրոյց 60,000 մարքի ծախքով կառուցանել հանգուցեայն արձանն Էսէնի հրապարակին վրայ :

—Ռուսական Աստուրիա եւ Ընկ. պաշտօնէից եւ մասնագիտաց յատուկ խումբ մը զրկեց Կեդր. Ասիա, բանակի ընդարձակ մշակութիւն ի գործ դնելու, բանակի ճնշիչ մեքենայներ կառուցանելու, եւ Թուրքաստանի հոգը քննելու նպակաւ : Խմբին ընկերակցան Գազանի Համալսարին դասախօս մը, երկրագործութեան մասնագէտ մը եւ ճարտարագէտ մը :

Ն Ե Ր Ք Ի Ն

Կրէտէի կայս. պատուիրակը՝ Մահմուտ Ճէլալէտօնին փաշա եւ Ահմէտ Բալիպ փաշա յաջողութեամբ աւարտած լինելով իրենց պաշտօնը, մայրաքաղաքը վերադարձան : Վեհ. Սուլթանն ի նշան իւր բարձր գոհունակութեան՝ Օսմանիյէի ակադեմիկոս պատ. ուսնչան շնորհեց Մահմուտ փաշային, առաջին կարգի Օսմանիյէ Բալիպ փաշային եւ այլ եւ այլ կարգի պատուանշանք, ատիճանք ու զրամական պարգեւներ նոցա ընկերացող պաշտօնէից :

—Ա. կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Ֆրանսայի արաքիւն գործոց նախարար Պ. Ֆլուքէնի :

—Յառաջիկայ երկուշաբթի Գուբարն Պայրամի տօնը լինելով, Եւստական նախարարութիւնը մէկ մէկ ամսաթուակ կը վճարէ այս օրերս կառավարական բոլոր պաշտօնէից :

—Առաջին կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Կրէտէի կուսակալ Քոստաքի փաշայի եւ առաջին կարգի Նէֆագաթ՝ նորա կնոջ տիկին Բէնպէ Լուիի :

—Օգոստ 12 շորքըրթի օրէն սկսեալ հացի գնոյն վրայ 5 փարայի զեղծ մ'եղած է, որով հացագործաց փութերու հացի օսկան 45 փարայի եւ սիւնիդիներու փութն հացը 55 փարայի կը վաճառուի :

—Վեհ. Սուլթանի երկրորդ սենեկապետ Հաճի Ալի պէյի եղբայր Մահմուտ էֆէնտի՝ Մախսուէի վարչութեան գանձապետ անուանեցաւ :

—Սեբաստիոյ իշխանութիւնը 10,542 չափ ցորեն զրկեց եւ յնկիւրի, յօգնութիւն ստվելոց :

—Նախընթաց օր ելաւ կայս. իրաւէն որուն համեմատ բազանդի տրոց օրէնքը գործադրութեան պիտի դրուի : Հաշիւ եւ զած է որ այդ տրոց գանձմամբ, տարեկան 500,000 ոսկւոյ մօտ հասցիւթ մը պիտի գոյանայ Տէրութեան Գանձուն :

—Կայսերական բժշկական վարժարանէն այս տարի Տօթիէօսութեան վկայական ըստացող չորսնասորտից մէջ կան երկու հայր, Յարութիւն էֆ. Գրիգորեան եւ Յարութիւն էֆ. Մարտիրոսեան. իսկ զեղադրուածութեան վկայական ստացողաց մէջ՝ Յովհաննէս էֆ. Վրդանէսեան :

—Մանսուրի կուսակալ անուանեցաւ Պաղտատի նախորդ կուսակալ Բիֆադ փաշա :

—Կայսերական իրաւէ մը կը հրամայէ որ Էնկիւրիի թիֆլիկ արտադրող այծերու իւրաքանչիւրէն 4 1/2 ական զրուշի տեղ 5 զրուշ առնուի : Այս տնօրինութիւն 1888 մարտի սկիզբէն գործադրութեան պիտի դրուի նաեւ Թուրքիոյ բոլոր գաւառաց թիֆլիկ արտադրող այծերուն համար :

—Համալսարն ապստամբներն որք 300 տնուորի չափ են, Ատանայի, Գոնեայի, Սեբաստիոյ եւ Էնկիւրիի նահանգները զըրկուած են, այն կողմերը զատ զատ բնակութիւն հաստատուելու համար :

—Բաբերդի նախորդ կուսակալ Եուսուֆ Զիա փաշա որ Կարնոյ մէջ կը դատուէր անպարտ արձակուեց է :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Կիւրակէ օրը մայրաքաղաքին բոլոր եկեղեցեաց մէջ հանդիսաւոր կերպիւ գոհարանական աղօթք կարդացուեցան վասն

թանկագին կենաց եւ բարօրութեան վեհ. Սուլթանին որ այնքան մեծ հոգածութիւն ցոյց կուտայ իւսկիւտարի տարաբաղդ հըրկիցեցոց նկատմամբ :

Պատր. Փոխանորդ Գեր. Հայրը Ս. Պատրիարք Հօր հրամանաւ այցելեց Սէլիմիյէի զօրանոցին մէջ գտնուող հրկիզեալներուն եւ միտարեց զանոնք :

—Խառն ժողովն իւր երկուշաբթի աւուր նստին մէջ նկատողութեան առաւ Տիգրանակերտի Գաւառ. Ժողովը մէկ գիրն, որով բարձրատիճան եկեղեցական մը կը խնդրէ իրենց առաջնորդ, եւ նկատելով որ բարձրատիճան եկեղեցականը ինչ ինչ պատճառներով կը հրաժարին այդ պաշտօնէն, առաջնորդական ընտրելեաց ցանկ մը պատրաստեց եւ միանգամայն որոշեց Եպիսկոպոսական վկայագիր տալ այդ ցանկին մէջէն Տիգրանակերտի Առաջնորդ ընտրուելիք անձին :

Տ. Գէորգ Ծ. Վ. Իւթիւճեան Պատր. փոխն. » Յովսէփ » » Մարտնեան » Յակոբ » » Աշոտ » Յովսէփ » » Այվաղեան » Վահան » » Յակոբեան :

Այս ցանկ պիտի զրկուի Եպիսկոպոսական Սիւրբեան Տ. Խորէն Եպիսկոպոսին որ այժմ Տիգրանակերտ կը գտնուի՝ իբր այցելու հովիւ, եւ առաջնորդական ընտրութիւն կատարելու հրահանգ պիտի տրուի Ն. Գերապատուութեան :

Ժողովն սկզբամբ ընդունեց կրօնական թերթ մը հրատարակելու առաջարկն եւ յանձնարարեց Կրօնական Ժողովոյն՝ ծրագիր մը պատրաստել թէ այդ թերթին ղեկավարութիւն պիտի ունենայ եւ ո՞վ պիտի լինի պատասխանատուն :

Ինչպէս յայտնի է, Պատրիարքարանի եւ մտացոյցին մէջ 24,000 զրուշի գումար մը յատկացուած է գաւառական այցելուաց Կրօն. Ժողովը սոյն այցելուաց ստիպողապէս առաքման պէտքն զգացուցած լինելով, Ժողովն այդ գումարէն ամսաթուակներ յատկացուց գաւառական այցելուաց զօրս պիտի ընտրէ Կրօն. Ժողովն :

Խառն ժողովը Կարնոյ համար առաջնորդական ընտրելեաց ցանկ մը պատրաստեց եւ ընտրութեան հրահանգ զրկեց Գաւառական Ժողովին Ընտրելիք են Տ. Խորէն Սրբեպիսկ. Նար-Պէյ, Տ. Հայեակ Եպիսկ. Դիմաքսեան եւ Տ. Ներսէս վարդապետ Այվաղեան :

—Կիւրակէ օրը Մաքրի-Գիլի մէջ տեղի ունեցաւ Տատեան վարժարանի հիմնարկութիւնը, ձեռամբ Գեր. Խորէն Նար-Պէյ Սրբազանի : Այս վարժարան նուիրուած է անուան հանգուցեալ Տատեան Առաքել պէյի որ ի կենդանութեան իւրում 470 ոսկւոյ գումար մը եւ 90 ոսկւոյ արժողութեամբ գետին մը յատկացուցած էր այս նպատակաւ :

—Այս կիւրակէ առաւօտ մայրաքաղաքս հասաւ ազգային մեծանուն բանաստեղծ Պ. Ռափայէլ Պատկանեան (Բամառ-Քաղի. պա) եւ հիւրընկալուեցաւ Պ. Գրիգոր Նիկողոսեանի բնակարանն ի Բերա : Պ. Պատկանեան բազմութիւն այցելութիւններ կ'ընդունի, կ'այցելէ մայրաքաղաքի ազգ. հաստատութիւնները, պատմական շէնքերն եւ կ'ուսումնասիրէ ամեն ինչ : Երկուշաբթի օրը Պատրիարքարան երթալով տեսակցեցաւ Ս. Պատրիարք Հօր հետ որոյ կողմէ Գեր. Փոխանորդ Հայրը փոխադարձ այցելութեան գնաց յաջորդ առաւօտուն : Ամեն կողմէ հրաւերներ կ'ուղղուին Պ. Պատկանեանի եւ կոչուեցան իւր տրուին :

Մեծայարգ բանաստեղծն յիսուն-եօթամեայ անձ մ'է, թեթեւ իմն խոսողացեալ ճակատով եւ այտերով : Մաքրեւ ու պիտիբըր մոխրագոյն են, դէմքը գունագեղ, ճակատը բարձր ու լայն է, այն բանաստեղծի ճակատն որ ծնունդ առած է այնքան յուզիչ երկերու : Աչքերը կը փողփողեն սպիտակ ակնոցին տակէն եւ մանրախոյզ աշխատութիւն մ'ընել կը թուին : Հասակը միջին է, մարմինն անձնեայ եւ թիկնեղ : Խօսուածքը ծանր է. բառերն հատիկ հատիկ դուրս կ'ենեւ շրթներէն. զուարթ ու խախալից ոճ մ'ունի, սուր դիտողութեամբ եւ ակնարկութեամբ խառն :

